ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 10 փետրվարի 2022թ. ժամը 15:00 ***ք. Սպիտակ***

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 26 անդամներից 17-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Մարտին Հաջյանը, Գագիկ Յայլոյանը, Աննա Աջամյանը, Կարեն Սարգսյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը, Սարիբեկ Ամիրյանը, Վահե Ղազարյանը, Արկադի Ասատրյանը, Մանուշ Աթյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 9 անդամներ՝ Արամ Իգիթյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Սամվել Սիմոնյանը, Նունե Էհտիբարյանը, Վարդուհի Թումանյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին

(Զեկուցող՝ Ք. Նիկողոսյան)

2) Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(Զեկուցող՝ Է. Թորոսյան)

3) Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(Զեկուցող՝ Է. Թորոսյան)

4) Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սամվել Ֆրունզիկի Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(Զեկուցող՝ Է. Թորոսյան)

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1.ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ)

Սպիտակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների և դրանց գործունեության վերաբերյալ մանրամասն պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը: Նա նշեց, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու կանոնակարգի 6-րդ գլխի 22.1 կետի համաձայն

Ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ ստեղծում է մշտական 3 հանձնաժողով.

ա) սոցիալական, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով, որը զբաղվում է մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդության, սպորտի, առողջապահության, սոցիալական ապահովության, այդ թվում նաև մայրության և մանկության, հաշմանդամության, աշխատանքի, զբաղվածության, ինչպես նաև հասարակայնության և արտաքին կապերի հարցերով,

բ) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով, որը զբաղվում է Սպիտակ համայնքի բյուջեի, վարկերի, փոխառությունների, հարկերի, տուրքերի, վճարների, առևտրի, սպասարկման, գովազդի, տրանսպորտի և գույքի կառավարման հարցերով,

գ) քաղաքաշինության, հողօգտագործման, բնապահպանության, ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով, որը զբաղվում է ճարտարապետության, քաղաքաշինության, ճանապարհաշինության, հողօգտագործման, բնապահպանության, բնակարանային ֆոնդի, և կոմունալ տնտեսության հարցերով:

22.2. Մշտական հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ ավագանու եզրակացություններ տալու նպատակով:

22.3. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում մշտական հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել համայնքի բյուջեից:

22.4. Յուրաքանչյուր մշտական հանձնաժողով կազմված է հինգ անդամից:

22.5. Մշտական հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է ավագանու որոշմամբ:

ՈՒստի , անհրաժեշտություն է առաջացել երեք խբակցությունների անդամներից ձևավորել մշտական հանձնաժողովներ, իսկ հետագայում մշտական հանձնաժողովի կազմից ընտրվելու է հանձնաժողովի նախագահ, որի թեկնածությունը հաստատվելու է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ հետևյալ կազմերով.

1) Սոցիալական, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով

Կարինե Դիլաքյան

Զալիկո Համբարյան

Ռաֆայել Սիմոնյան

Վարդուհի Թումանյան

Նարինե Հակոբյան

2) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

Մարտին Հաջյան

Սասուն Ասատրյան

Լուսինե Ավետիսյան

Սամվել Սիմոնյան

Աննա Աջամյան

3) Քաղաքաշինության, հողօգտագործման, բնապահպանության, ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով

Նունե Էհտիբարյան

Կարեն Սարգսյան

Արտակ Մաթոսյան

Սարիբեկ Ամիրյան

Համլետ Մազմանյան:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ)

Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանը նշեց, որ համայնքի ղեկավարին է դիմել «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Գևորգյանը և ներկայացրել ներդրումային ծրագիր /արժեքը՝ 1,8 միլիարդ ՀՀ դրամ/, որով նախատեսվում է Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում կառուցել թռչնամսի արտադրության օբյեկտ: Ներդրումային ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է փոփոխել հողամասերի նպատակային նշանակությունը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01092020-06-0061 վկայականը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23042021-06-0014 վկայականը և «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Գևորգյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝

1) 06-109-0114-0014 կադաստրային ծածկագրով 1,42717 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի,

2) 06-109-0202-0059 կադաստրային ծածկագրով 0,30275 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ)

Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանը ավելացրեց, որ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխումը կապված է օրակարգի նախորդ՝ 2-րդ հարցում նշված ծրագրի իրագործման հետ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082019-06-0044 վկայականը և «Սպիտակի

թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Գևորգյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0202-0022 կադաստրային ծածկագրով 3,63811 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

Հարցեր, առարկություններ չեղան:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

4 . ԼՍԵՑԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱՄՎԵԼ ՖՐՈՒՆԶԻԿԻ ԼԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Է. ԹՈՐՈՍՅԱՆ)

Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Էդգար Թորոսյանը նշեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Սպիտակ համայնքի բնակիչ Սամվել Ֆրուզիկի Լամբարյանը Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ 4 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասից առանձնացված՝ 0,009209 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի թիվ 498 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետով և 3-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ

10052018-06-0011 վկայականը և Սամվել Ֆրունզիկի Լամբարյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սամվել Լամբարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 06-006-0043-0021 կադաստրային ծածկագրով 4 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասից առանձնացված՝ 0,009209 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ համաձայն հատակագծի:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ՀԱՋՅԱՆ
ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ